

մին մարդու մէկը, չկարողանալով զսպել իրեն, գուրս պրծաւ տեղից, վազեց գէսի հսկայական քայլերը, և դժուարութեամբ տեղաւորուելով պարանի ծայրին՝ սկսեց ճիգ թափելով ցակըտել, թռչել սիւնի շուրջը, որ քիչ զուարճութիւն չէ պատճառում հասուն ու մատաղ հասարակութեանը։ Մնում է միայն ցանկալ, որ միւս քաղաքներն էլ հետեւն այդ գեղեցիկ օրինակին, զի՝ in corpore sano—mens sana ...»

Թարգմ. Մարկոս Բահ. Տէր-Մլրչեան.



ՄԱՐՑԻՆԻԿԱ ԿԴՅՈՒ Ա.Պ.ԷՏԸ ԵՒ ՀՐԱՅԻՈՒՅՆԻՆ ԵՐԵՒՈՅԹ-  
ՆԵՐԻ ՊԱՏՃԱԽՈՆԵՐԸ,

Մայիսի 8-ին, նոր տոմարով, Մարտինիկա կղզու վրայ սարսափելի աղետ պատահեց, որ անթիւ դոչեր տարաւ. Աէն-Պիկը քաղաքը կործանուեց ձագատ լեռան ժայթքումից։ Մի քանի բոպէի մէջ ծաղկած, քաղաքակրթութեան բոլոր բարիքները վայելող քաղաքը աւերակների կոյտ դարձաւ, որոնց տակ մնացին 40,000-ի չափ այլանդակուած, անշնչացած զիակներ։ Այս գժբաղդութիւնը, որի տռաջ նոեմանում է Պօմպէա և Հերքուլանում քաղաքները ոչնչացնող պատմական աղետը, առաջացնելով մեր մէջ սարսափի զդացում և լցնելով մեր հոգին կարեկցութեամբ գէպի գժբաղդ կղզու թշուան մնացած բնակիչները, որոնք ոչ միայն ապրելու միջոցներից զուրկ են, այլ և մշտական երկխողի տակ՝ մի գուցէ։ Ա. Պիկը բնակիչների վիճակին ենթարկուին, ակամայ տրխուր ենթարկութիւնների տեղիք է տալիս և մեր ահօղնական վիճակը պարզում։

Նոյն իսկ սովորական երկրաշարժի ժամանակ, երբ երկիրը որի կայունութեան մասին կասկած չէինք կարող ունենալ, յանկարծ սկսում է մեր ոտների տակ տատանուիլ, երբ մեր ապաստարան եղող սները քանիդւում են և մենք

ըովէ տու ըովէ սպասում ենք թէ ահա աւերակների փըլուածքների տակ կթաղուենք կամ թէ գետինը կտառուի և մեղ էլ հետը կտանէ՝ բնութեան ահեղ երեսյթը բաւական է, որ մարդ խելքահան լինի սարսափից։ Խոկ երը այս բոլորի վրայ աւելանում են նոր ահաելի երեսյթներ՝ մի մեծ հրաբուխի ժայթքելու պատճառով, երբ նրա բերանից դուրս են գալիս ծուխն բոց և խեղդող գաղեր, որոնք թօւնաւորում են օդը, խոկ ձայթող քարերի հետ հրեղէն անձրել և լուայի ամեն բան ոչնչացնող հոսանքները ծածկում են շրջակայքը, փախուստի բոլոր միջոցները անշնարին զարձնելով՝ մեղ համար պարզ պէտք է լինի, թէ ի՞նչ խորին յուսահատութեան և վշտի մէջ կընկնեն այն մարդիկ, որոնք ենթարկում են այսպէս միանգամայն երկրաշարժի և հրաբուխի աւերումներին։ Այդ ժամանակ զգում ենք, որ մենք անզօր ենք, անօգնական։ մեր ոչնչութիւնը ակնյայանի է դառնում մեղ համար։ Հասարակութեան սակեզած արհեստական արգելքները ոչնչանում են, հաւասարեցնելով հարուստին և իշխանին աղքատի ու մշակի հետ։

Յայց Մարտինիկա կղզու աղետը, որ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւեց զէպի հրաբխային երեսյթները, այնքան անսպասելի էր, այնքան շուտով ամայացրեց քաղաքը, որ ժամանակ չկար ոչ միայն այսպիսի խորհրդածութիւններ անելու, այլ և կեանքի ազատութեան մասին մտածելու։

Հրաբուխի ժայթքման ժամանակ նկատուում էր մի նշանաւոր երեսյթ։ ականատեսների պատմելով հրաբուխի բերանին գոյացան «սատանի» քամիները որից յետոց ակաց հրեղէն անձրեւ։ Այս երեսյթը շատերին տարակուսաների մէջ է ձգում։ չկարողանալով բացատրել այսպիսի ահեղ երեսյթի ծագումը շատերը կարող են չհաւասար ականատեսների ասածներին։ Սակայն դրա նման երեսյթներ ուրիշ ժայթքումների ժամանակ էլ նկատուել են, թէպէտ շատ փոքր չափով։ Այս տեսակ երեսյթների գոյացման համար անհրաժեշտ է, որ ժայթքման ժամանակ զօրեղ ձայթումներ տեղի ունենան՝ ոչ թէ օդի, այլ հրաբուխի մէջ, որտեղից դուրս են գալիս լուայից սեղմաւած խտացած գաղեր։ Գաղերը՝ բերանից դուրս թա-

փուելով և Ճնշումից աղասուելով՝ վառւում են, երբ միանում են օդի մեջ եղած թթուածնի հետ։ Նրանք այրուում են մաս մաս, որովհետեւ մի կողմից գազերի զանգուածը ձայթքումից և զուրս վիժած ուրիշ նիւթերից բաժանուում է մասերի՝ միւս կողմից, հրաշեկ գազերը հրաբուխի բերանի մօտ թթուածնին չգտնելով, ցրուում են չորս կողմը։

Ոչ պակաս տարօրինակ էր հետեւեալ երեսյթը։ Երբ աղետի զոհերին դիտում էին, երեաց, որ նրանց մեջ կան դիակներ բոլորովին ոչնչացած, բայց որոնց շորերի մի մասը կամ մօտիկ ընկած հեշտ այրուող իրերը անվնաս են մնացել կրակից։ Այսպէս, մի դիակի վրայ կօշիկները անվնաս էին մնացել, մի ուրիշը որի ամբողջ մարմինը այրուել էր, ձեռքին պինդ բռնած ուներ բոլորովին անվնաս մի տոպրակ։ Կան այնպիսիներ, որոնց միայն մի կողմն է այրուել, մի քանիսի վերայ էլ կրակը խնայել էր շորի որ և է մաս, օրինակ գլխարկը։ Վերջապէս, այրուած դիակների կողքին պատահում են դիակներ, որոնց կրակը ձեռք չի տուել։ Արանք երեկի խեղղուել են, մնալով թթուածնից զուրկ մթնոլորտում, որ այդ ժամանակ լցուել էր հեղձուցիչ գազերով։

Այս տարօրինակ երեսյթը հասկանալի է դառնում նորանով, որ ինչպէս ասացինք, զուրս վիժուած գազերը մաս մաս են այրուել։

Մարտինիկայի գժբազդ բնակիչների օրհասական դրութեան մասին մտածմունքի մեջ ընկնելով՝ դիտուններն իրենց հարց են տալիս։ Զեր կարելի արդեօք առաջուց զուշակել այս աղետը, միջնէ մեր սկյամօմեարները\* չեին ցոյց տալիս գժբազդութեան մերձեցումը։ Եւ սահպուած են խոստովանելու, որ դիտութիւնը ոչինչ զուշակել չեր կարող և գեռ անզօր է երկրաշարժի և ժայթքումների գեմ։ Հըռաշակաւոր գիտնական Պալմիերի, որ իւր ամիողջ կեանքը նուիրել էր Վեդուվի գործունեութիւնը դիտելուն։ 1872 թուի ուժեղ ժայթքման օրամուտին վերագարձաւ նէապօլ, համոզուած լինելով, որ այդ գիշեր որ և է լուրջ երեսյթ չի կարող

\* Երկրաշարժի ուղղությունն ու ոյժը ցոյց տռաղ գարծիքներ։

աեղի ունենալ: «Առհասարակ, նկատում է Նէյմայր, ժայթքումների մասին մինչև Հիմա կատարած գուշակութիւնները միայն մի հետեանք են ունեցել՝ վախեցրել են շըջակայ բընակիչներին»:

Արդ, ի՞նչ պատճառներից են առաջ գալիս հրաբխային երեոյթները: Գիտնականները այս առթիւ երկու բանակի են բաժանեում: մի քանիսը ընդունում են, որ երկիրը վաղուց բոլորովին սառել է, միւսներն ընդհակառակին ենթադրում են, թէ նրա ներսում հրահեղուկ միջուկ կայ, կամ գոնէ, եթէ միջուկը կարծը է, ծածկուած պէտք է լինի զրսից կարծը կեղեկի տակ գտնուած մետաղների շերտով:

Մի քանի հիմունքներ կան կարծելու, որ երկրիս ներսը կարծր, բաւական մեծ խտութեամբ միջուկ է գտնուում: Ամենից առաջ ուշադրութիւն պիտի դարձնել երկրագնախ տեսակարար կշռի վրայ: որ անկասկածելի է և ճշմարտութեամբ որոշուած=5, 5: Որովհետեւ կեղեկի զանդուածը կազմող նիւթերի խտութիւնը պտտում է 2, 5—3-ի շուրջը, ապա ուրեմն պարզ է, որ երկրագնախ ներսի մասը անհամատ աւելի խտութիւն պիտի ունենայ. այնաեղ պիտի գտնուեն երկաթի, նիկէլի մեծամեծ հանքեր, ինչպէս և ուրիշ աւելի խտութիւն ունեցող մետաղներ, օր, ոսկի, պլատին և այլն:

Բացի սրանից՝ այն հանդամանքը, որ որքան իջնում ենք երկրի խորքը, այնքան ջերմութեան աստիճանը բարձրանում է (որ և միջուկի հրահեղուկ դրութեան գլխաւոր ապացույցներից մեկն էր համարւում), աւելի շուտ այս տեսակ ենթադրութեան հակառակն է վկայում: Իրօք, թէպէտ երկրագնախ զանազան տեղերում՝ խորութեան հետ ջերմութեան աստիճանն էլ բարձրանում է, բայց այս բարձրանալը ոչ միայն միօրինակ չէ (այսինքն 1<sup>0</sup> 28—39, 3 մետրի վրայ), այլ որ աւելի նշանաւոր է, մինչև անգամ միենոյն տեղում ճիշտ միօրինակութիւն չի նկատում: Մեծ խորութիւնների հասնելուց յետոյ, նկատելի է, որ անհրաժեշտ կլինի շատ աւելի մետրներ ցած իջնել, որպէս զի բարեխառնութիւնը միենոյն 1<sup>0</sup>-ի բարձրանայ:

Մի քանի ուրիշ ապացոյցներ ևս կան, որոնց վրայ սակայն կանգ չենք առնի, այլ կաշխատենք պարզել այն կասկածները, որոնք ակտմայ ծագում են երկրիս միջուկը կարծր ընդունելուց: Ամենից առաջ հարց է ծագում, երկրագունդը ի՞նչովէս սառաւ: Բնական կլիներ ենթաղըել, որ միջամալորակային տարածութեան ցրտութիւնից ամենից առաջ պիտի արտաքին կարծր կեղել կազմուեր, որի երերումներն ու տատանումները այնպէս հասարակ և բնական կերպով բացարում են ժայթքումներն ու երկրաշարժները: Բայց որադէմ, բացի յիշեալ փաստից, ուրիշ առարկութիւն է ծագում, որ բղխում է այն հասարակ գատողութիւնից, թէ սառած և ուրեմն խտացած մետաղները արտաքին մակերեւոյթի վրայ չեն կարող մնալ, այլ իրեւ աւելի ծանր մարմիններ, պէտք է ընկղմուեին դէպի կենտրոնը, և այսպիսով երկրագնախ ներսում վերջ ի վերջոյ ամենից առաջ կարծրացած մետաղներ պիտի զիզուեին:

Այս տեսութիւնը պաշտպանում էին Զիւս, Նէյմի Նէյմայր, Բէյեր և ուրիշներ, որոնք իրանց կարծիքը նոր փորձերով հաստատում են: Փորձերը ցոյց են տալիս, որ սասարիկ Ճնշման ներքոյ (իսկ երկրի ներսում Ճնշումը շատ մեծ է) մինչև անդամ՝ զաղերը կարծր մարմին են դառնում: Խւնդի հաշուելով, ջուրը  $80^{\circ}$ <sub>2</sub> աշխ. մղ. խորութեան տակ մնդիկի խտութիւնը պիտի ունենայ, իսկ զրանիար իւր ծառալը  $16^{\circ}$  պիտի փոքրացնէ, և այլն: Բայց սրանից, հանքերի հալուելու աստիճանը Ճնշման հետ ուղիղ համեմատութեամբ բարձրանում է:

Սակայն այս գատողութիւնները առանց առարկութիւնների և տարակուսանքների չեն մնում:

Երօք երկրագնախ խտութիւնը, ինչովէս յայտնի է, հաւասար է 5, 5-ի. մինչդեռ զանազան հանքերի վրայ ճնշումների համար կատարած փորձերից դուրս է զալիս, որ երկրագունտը շատ աւելի խտութիւն պիտի ունենայ, քան նրա ծառիւ որսշուած տեսակարար կշիռն է ցոյց տալիս՝ եթէ ի հարկէ ընդունենք, որ միջուկը զանազան հանքերով է լցուած: Սրանից հետեւում է, որ երկրի ներսում, ինչովէս

ասում է պրոֆ. Խնօստրանցեվ, կայ մի ինչ որ ոյժ, ոչ  
Ճնշման հակառակն է գործում։ Ճնշումը աշխատում է  
մարմինները խռացնել, մինչդեռ այն ոյժը աշխատում է լայ-  
նացնել։ Այս ոյժը, ենթադրուում է, որ տաքութիւնը  
պիտի լինի, որ խորութեան հետ բարձրանում է։

Միւս կողմից մի քանի աստղաբաշխական փաստերց ո-  
քոնց մէջ և նուտացիայի երեսոյթը, այսինքն երկրիս պատե-  
լու առանցքի տատանումները, ըստ երեսոյթին թոյլ են տալիս  
մնթադրելու, որ երկրիս ներսը հրահեղուկ դրութեան մէջ է։

Վերջապէս, ի՞նչ է գանեռում ուրեմն երկրիս ներսում,  
կհարցնէ շուարած ընթերցողը։ — Ամենայն հաւանականու-  
թիամբ մի կարծր միջուկ, այսպէս են ընդունում ամենալաւ  
երկրաբանները։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ  
հեղուկի զանդուածը, որի գոյութիւնը դժուար թէ մեր-  
ժուի, երկրիս մէջ ինչպէս է գասաւորուած, դրան դժուար  
է որոշ պատասխան տալ. մի քանիսը ենթադրում են, ինչ-  
պէս առաջ էլ նկատեցինք, որ հրահեղուկ զանդուածը  
դանւում է արտաքին կեղեկի և միջուկի միջեւ. իսկ միւսնե-  
րը, որոնց մէջ և հոչակաւոր երկրաբան Լեոպիէլ ընդունում  
են, այսպէս տաճա միմեանցից անջատ ստորերկրեայ օջախներ  
որոնց մէջ և կենտրոնանում է հրարիսային գործունեու-  
թիւնը։

Առաջին ենթադրութիւնը դէք մասամբ ջրւում է հենց  
այն իրողութեամբ, որ զանազան հրաբուխների լաւաները  
իրանց կազմութեամբ տարբեր են. այս իրողութիւնը զը-  
ժուար է բացատրել արտաքին կեղեկի ազդեցութիամբ։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ արդեօք սառըեր-  
կրեայ օջախները երկրի սառած զրութեան մէջ գոյութիւն  
ունենալ չեն կարող, կամ երկրիս ներսը կատարուող քիմիա  
—մեքենական գործունեութեան արդիւնք չեն՝ մեզ համար  
տռանձին կարեորութիւն չունի. յամենայն դէպս այդ տե-  
սակ գործունեութիւնը ընդունակ է ոչ միայն ահաղին չա-  
փով տաքութիւն պահպանելու ստորերկրեայ օջախներում,  
այլ և հենց ինքը պատճառ է լինում հրարիսային երեսոյթ-  
ների։

Ստորերկեայ օջախներից մի քանիսը երեկի իրար հետ  
կապ ունին։ այս բանը հաստատուում է նրանով, որ երբեմն  
զանազան հրարուխներ միաժամանակ բորբոքուում են և կամ  
ընդհակառակն դադարուում են այն ժամանակ, երբ մի ուրիշ  
շայթքուում է։ Պէտք է ենթադրել, որ այս կապը երբեմն  
միաժամանակ կարուում է վլուածքների և երկրիս սեղմուե-  
լու հետ կապ ունեցող ուրիշ երեսյթների շնորհիւ, որից և  
ծագուում է հրարուխների դործունէութեան անկանոնութիւ-  
նը։ Այս երեսյթը աեղի չեր ունենայ, եթէ հրահեղուկ  
զանգուածը կեղեւի և միջուկի մէջ եղած ամբողջ տարածու-  
թիւնը բանէր։

Ինչ էլ որ լինի, երկրիս մակերեսյթի տակ սաստիկ ձըն-  
շման ներքոյ գտնուող հալուած զանգուածն է անշուշտ պատ-  
ճառը, որ հրարխային ժայթքումներ են տռաջ գալիս։ իսկ  
նրա դործունէութիւնը գրգռուում է ջուրը։

Եւ իրօք, այժմեան բոլոր դործող հրարուխները, ինչ-  
պէս և հանգածները, ջրի մօտ են գտնուում։ Նրանց մեծ  
մասը կղզիների վրայ կամ ջրի տակ է։ մնացածները զըտ-  
նուում են կամ ծովի եզերքներին և երկայնացած հրուան-  
դանների վրայ, կամ թէ չէ մեծամեծ ջրամբարների մօտ-  
նոյնը պէտք է աս'լ և հանգած հրարուխների մասին։ Ինչ  
վերառերուում է կենտրոնական Ասիայի հրարուխներին, որոնք  
տռաջ ընդհանուուր կանոնից դուրս իրրե բացառութիւն էին  
ընդունուում։ Հիմա սպացուցուած է, որ նրանք իսկական  
հրարուխներ չեն։ այլ սառերկրեայ քարածուխի հանքերի  
հրդեհների հետեւանք։

Աւելորդ չի լինի այսակեղ միշատակել աշխարհիս վերայ  
գտնուող հրարուխների գասաւորութիւնը։ Խաղաղ ովկիա-  
նոսը շրջապատուած է հրարուխների մանեսակով, որ սկսուե-  
լով Աշեասկա թերակղզուց՝ անցնուում է Տրիտանական Կո-  
լումբիայի, Կալիֆորնիայի և Ֆերմիկայի վրայով դէսի Կենտ-  
րոնական և Հարաւային Ամերիկան մինչև Հրոյ երկիրն և Նոր-  
Կոռլանդիա, և վերջանուում է Երեք և Տերրոր բեկոսյին  
հրարուխներով, որոնք հարաւային թեեւի սառցալատ ա-  
նապատաներուում յաջախ բորբոքուում են։ Այնուհետեւ հրա-

բասային մանեակը անցնում է դէպի Նոր Զելանդիա, Պապուագիա, Զօնդեան, Ֆիլիպպեան և Մօլուկեան կղզիները, կարում է Եատոնիա և վերջանում է Կամչատկայի ու Ալեռութեան շարքի վրայ:

Առանցեան ովկիանոսում հրարուխները հակառակ կերպով են դասաւորուած՝ ոչ թէ ափերի վրայ, այլ համարեա մէջ տեղը, կազմելով մի վիթխարի լեռնաշղթայ հիւսիսից դէպի հարաւ. այսպէս են՝ Եան Մայէնի, Խոլանդիայի, Ազօրեան կղզիների, Կանարեան խմբի և Դալարի զլիսի. Գվինէայի ծռվափի և Համբարձման, այլ և ա. Հեղինեի հանգած հրարուխները: Վերջապէս, Անտիլեան կղզիների հրարուխները, որոնց մէջ պիտի հաշուել նաև Մօն Պելէն (Ճաղատ սար), Աէն Պիէր քաղաքը կործանողը՝ պատկանում են երրորդ համակարգութեան, որ շրջապատում էր Նախնական Միջերկրական ծովը: Այս ծովը մի ժամանակ, նախապատմական շրջանում, բաժանում էր Հիւսիսային Ամերիկան, Եւրոպան և Ասիան, որոնք այն ժամանակ մի ամրողջութիւն էին կազմում՝ մի ուրիշ, հարաւային մայր ցամաքից, որ կազմուած էր այժմեան Հարաւային Ամերիկայից, Աֆրիկայից և Աւստրալիայից: Այս նախնական ծովի առանցքով մի շարք հրարուխներ են դասաւորուած, որոնք սկսուում են Հիմալայեան լեռներից, անցնում են Յունական Արշիպելագի, Էտոնայի, Վեցութի, Տեներիֆա հրուանգանի և Անտիլեան կղզիների վրայով դէպի Պանամայի պարանոցը, որտեղ և վերջանում են: Այս համակարգութեան հրարուխների իրար հետ ունեցած կապը երեւում է Միջերկրական ծովի առազանի և Քարայիրեան ծովի մէջ եղած հրարխային և երկրաշարժի երևոյթների զուգորդութիւնից: Խկանգէս եթէ ուշ դարձնենք, որպիսի տարրինակ հետեւողականութիւն է երեւում: Վետրուարի 13-ին (նոր տոմարով) Շամախում սարսափելի երկրաշարժ է լինում, որից քաղաքը կործանւում է, 2000 մարդ կոտորվում, ապրիլի 18-ին երկրաշարժ Գվատեմալայում (Կենտրոնական Ամերիկա). մայիսի 6-ին սոյն տեսակ երևոյթներ, բարեբաղդարար շատ թոյլ հարաւային Ֆրանսիայում և Սպանիայում, մայիսի 8-ին սարսափելի աղէտ Մարտինիկա

կղզու վրայ՝ 13-ին հրաբխային ժայթքում Կոլիմում (Մեքսիկայում). 14-ին սառըերկրեայ գօրեղ հարուածներ Օլորունում (Պիրինեան լեռներում). 25-ին երկրի գօրեղ տատանում Տեմեշվարում (Անգարիայում). զերջասէս, յունիսի 4-ին Բագուի մօտ Գուգիգրամի թոյլ ժայթքում և երկրի տատանում Վելլեախում (Խաչիայում): Այսպիսի սերտ կապ նկատելի էր օրինակ 1756 թուի նոյեմբերի 1-ի ուժեղ երկրաշարժի ժամանակի, որ կործանեց Պորտուգալիայի մայքրաբարձ Լիսաբոնը. 4 ժամ յետոյ այս նոյն աղէտի հետքերը նկատելի եղան Տրինիդատ և Մարաինիկա կղզիների վրայ՝ երկիրը այստեղ էլ սկսեց տատանուել:

Բոլոր այս երեսյթները վերոյիշեալ նախնական ծովի պատմութեան շարունակութիւնն են կազմում. տարաբարդարար այս պատմութիւնը գեռ երկար շարունակուելու է: Այս ծովը քիչ քիչ բաժան-բաժան էր լինում՝ նորանոր երկիրներ էին դոյանում, հները ոչնչանում և շարունակ արտաքին ձեւը փոխում էին: Այս կերպարանափոխութիւններից մէկի ժամանակ անյայտացաւ հին Ապանտների երկիրը, որի մասին յիշատակում է Պատոն Փիլիսոփան: Ո՞վ է իսմանում, ներկայ աշխարհներից որին է պիճակուած այս տեսակ տիսուր վախճան ունենալ: Մի քանի դիտնականներ այս առթիւ կասկած են յայտնում Փոքր Ասիայի և Միջերկրական ծովի ափերի վերաբերմանը:

Վերագառնանք նախկին հարցին՝ հրաբուխների և ջրերի ունեցած կապին: Այսպէս ուրեմն, անպատճառ մի կապ պէտք է լինի հրաբուխների և ջրի, մանաւանդ ծովի ջրի մէջ: Ենթադրում են, որ ջուրը հանքերի ձեղքերով թափանցում է մինչև հրահեղուկ զանգուածը, որտեղ ահագին ճշման և բարձր բարեխառնութեան աղղեցութեան տակ նա սեղմում է: Արա շնորհիւ լաւայի զանգուածը ծաւալով մեծանում է և ձեղքերի միջով բարձրանում է դէպի երկրիս մակերեսյթը. այս բանին նպաստում է նաև երկրիս կեղեւի մշտական սեղմուիլը: Աակայն հաղիւ հազ լաւայի բարձրանալուց յետոյ ճնշումը որոշ տարիճանի թուլանում՝ որ ահա ջուրը զոլորշիանում է և բնականապէս լայնա-

նում՝ իր հետ բարձրացնելով հալուած զանգուածը; որը նայելով գոլորշիների քանակութեան և զօռութեան, դուրս է վիժուամ բերանից մեծ կամ քիչ սաստկութեամբ:

Ընդհանուր դժերով ներկայումս այսպէս է հրարուխ ների մասին եղած տեսութիւնը՝ աւելացնենք միայն, որ խիստապէս երկրիս ներսում հրարխային երեսյթը շատ բարդ պատկեր ունի:

Այժմ մի քանի խօսք էլ երկրաշարժների մասին որոնց ունեցած կապը հրարխային գործունէութեան հետ շատ գէպքերում կասկածի տեղիք չի տալիս:

Այս հանգամանքը բոլորովին անսուզի կերպով ընդհանրացնում են և ի զուր տեղ անհանգստութիւն պատճառում: Աւերիչ երկրաշարժի գէպքերը, որոնք պատահեցին մեզանում կովկասում (Նամախի, Կարին և այլն), Սևմիրէչեան շրջանում՝ (Վէրնիյ), Թուրքաստանում, Ղրիմում, Կամչատկայում այլ և հազուագիւտ և թոյլ երկրաշարժներ միջին և արևմտեան Ռուսաստանում՝ սովորաբար վերագրուում են միևնոյն պատճառին, այսինքն՝ հրարխային գործունէութեան: Մինչդեռ ամբողջ Եւրոպական Ռուսաստանը Ղրիմի հետ միասին ենթակայ է այնպիսի երկրաշարժներին որոնք կազ ունին կամ շերտակազմութեան խանգարման հետ, որ առաջանում է երկրագնտիս ներսի փլուածքների շնորհիւ կամ կախումն ունին լեռնակազմութեան գործունէութիւնից, այսինքն՝ ծերացող երկրի «երեսի» բնական կերպով կնճռուածուելուց:

Բոլոր սրա նման գէպքերը, որոնք չին ժամանակներից նկատելի են, իրանց մէջ երկիւղալի բան չեն պարունակում: որովհետեւ մեծ մասամբ տեղական բնաւորութիւն են կրում: Իսկ եթէ բաւականին տարածութեան վրայ են գործում՝ այնուամենայնիւ իրրեւ ինքնուրոյն երեսյթ չեն ներկայանում: այլ յայտնւում են իրրեւ արձագանք հեռաւոր երկրաշարժների: Ամենավատ գէպքում բանը կվերջանայ նրանով, որ շինութիւնների միջ մի քանի ձեղքեր կրացուին:

Ուրիշ բան է Ասիական Ռուսաստանն ու Անդրկովկասը. ոյնտեղի երկրաշարժները բոլորովին հրարխային բնաւորու-

թիւն են կրում. բայց թէպէտ երկրաշարժները այս կողմանում աւերում են երկիրը և երբեմն երկար շարունակում են, այնուամենայնիւ այս երկրներում հրաբուխներ չեն դոյանայ և մինչև անդամ երկրաշարժներն ել ժամանակի ընթացքում իրանց ոյժը պիտի կորցնեն: Երբեւ հիմք այս տեսակ եղբակացութեան ծառայում է այն, որ ջրամբարները՝ հրաբխային գործունեութեան այդ գրգռիչները, աստիճանաբար չորանում են, և երկրիս կեղեփ հաստութիւնը, որ առանց այն էլ մեծ է, շատանում է: Յամենայն գէպս Սէն-Պիէրի նման սարսափելի աղէտներ մեզանում չեն կարող տեղի ունենալ. այդպիսի դժբաղղութիւնները ջրառատ տեղեւում կարող են պատահել, օրինակ կղզիների վրայ:

Գալով Մարտինիկային՝ դժբաղղ կղզու բնակիչները դեռ ուշը չեն եկել Սէն-Պիէրի աղէտից յետոյ, մանաւանդ որ ծաղատ սարի և Անտիլեան կղզիների ուրիշ հրաբուխների գործունեութիւնը գեռ չի դադարել: Կործանուած քաղաքի տեղ հիմա երեւում են աւերակների կոյտեր, գորշ կանաչադոյն մոխիրով ծածկուած: Կեանքը բոլորովին մեռած է, նախկին քաղաքի փողոցներում միայն մեծ խարոյիներ են վառուած, որոնց վրայ այրում են աղէտի զոհերին: Առաջնրանց գետնի մէջ էին թաղում: բայց այս աշխատանքը մարդկային ուժից վեր էր՝ զիակների շատութեան պատճառով, ուստի սկսեցին այրել. իսկ հիմա էլ մտածում են ձգել գեռ ևս վառ մնացած մոխրի մէջ, որտեղ զիակները բոպեապէս ոչնչանում են: Զնայելով ախուր պատկերներին և սարսափելի տեսարաններին, աւերակ քաղաքում շրջակայ տեղեւից յայտնուեցան աւազակային խմբեր, որոնք յափշտակում են այն ամենը, ինչ որ հրաբուխը ինայել է: Ֆրանսիական կառավարութիւնը ստիպուած է խիստ միջոցների զիմել հրոսակների բացուած ախորժակները փակելու համար:

